АРМЕНОВЕДЕНИЕ

DOI 10.24412/1829-0450-2025-2-155-171
УДК 1751

Поступила: 09.12.2024г.
Сдана на рецензию: 11.12.2024г.
Подписана к печати: 08.04.2025г.

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ (ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ս.Ֆ. Թորգոմյան[1], Ռ.Պ. Զուլֆայան[2]

Խ. Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
sofitorgomyan@gmail.com[1], rrdzh@mail.ru[2]
ORCID [1]: 0000-0002-7024-361X, ORCID[2]: 0000-0001-5798-2699

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամեն նոր օր աշխարհը մարդուն ներկայանում է նոր դեմքով, ամեն օր նոր իրավիճակ է ստեղծվում, որում իր գոյությունը պահպանելու, ստեղծված խնդիրները լուծելու համար յուրաքանչյուր անհատ պիտի իրադրությունը վերլուծելու, իմաստավորելու և համապատասխան վճիռներ կայացնելու կարողություններ ունենա: Կյանքը հասարակությանն ապրելու և գործելու նոր ռազմավարություն է պարտադրում: Այդ նոր ռազմավարության մշակումն էլ ամենաընդհանուր իմաստով կազմում է ժամանակակից կրթական քաղաքականության բովանդակությունը: Ընթանում է վերակառուցման մի պրոցես, որը ոչ միայն մեր կրթական կառույցներին է վերաբերում, այլ նաև մեր մտածողությանը: Անհրաժեշտություն է առաջանում նախնառաջ սովորողների մեջ ամրապնդելու այն համոզմունքը, որ հասարակության ակտիվ անդամ դառնալու և տարազան գործընթացներից անմասն չմնալու համար նրանց հարկավոր է ամբողջ կյանքում սովորել:

Լեզուն մտածողություն է, հաղորդակցման միջոց, խոսքով մտածումներն ու հույզերը ձևակերպելու կարողություն:

Սույն հոդվածում քննել ենք բազմաբնույթ մտածողության և հանրակրթության պետական չափորոշիչներով սահմանված կարողունակությունների տրամաբանական կապը և լեզվի քերականական կառույցների (մեր դեպքում ընտրել ենք շարահյուսական հոմանիշներից երկուսը) ուսուցման դերը և նշանակությունը այդ

կարողությունների ձևավորման գործում: Մեր խնդիրն է ներկայացնել բազմաբնույթ մտածողության տեսակներն ու առանձնահատկությունները, միջնակարգ կրթության կարողունակությունները, շարահյուսական հոմանիշների ուսուցման միջոցով դրանց զարգացման հնարավորությունները: Միաժամանակ նշենք նաև, որ ավագ դպրոցում, նաև բուհական համակարգում շեշտադրվում է սովորողների ինքնուրույն ուսումնառությունը:
Ուսուցման գործընթացում կարողունակությունների աստիճանակարգման մեջ առաջնային է սովորել սովորելու կարողունակությունը, այնուհետև ինքնաճանաչողական ու սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա, մշակութային կարողունակությունները՝ որպես ընդհանրական կարողունակություններ: Մինչդեռ լեզվական գրագիտություն և կարողունակությունը ու մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակությունը ներկայացվում են ըստ շարահյուսական հոմանիշների (փոխակերպումներ) ուսուցման առաջարկվող տարբերակի՝ հաշվի առնելով հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը:
Հիմնաբառեր՝ բազմաբնույթ մտածողություն, կարողունակություններ, շարահյուսական հոմանիշներ, փոխակերպումներ, կրթական վերջնարդյունքներ:

Ներածություն

Այսօր մանկավարժության մեջ կիրառվում է «բազմաբնույթ մտածողություն» տեխնոլոգիան: Բազմաբնույթ մտածողության (հնարավորություն, օժտվածություն) տեսակները ընկած են հանրակրթության պետական չափորոշիչներով սահմանված կարողունակությունների հիմքում: Մեր ընտրած թեմայի (թեման ընդգրկված է 11-րդ դասարանի հայոց լեզվի առարկայական ծրագրում և դասագրքում) ուսուցումը փորձել ենք կառուցել՝ ըստ վերոնշյալ կարողունակությունների կամ մտածողության տեսակների:

Մեթոդաբանություն

Փոխակերպումների քննությունը ենթադրում է որոշակի լեզվական նորմերի պահպանում, քանի որ համեմատվում են այնպիսի իրողություններ, որոնք ունեն բովանդակային ընդհանրություններ և քերականական կառուցվածքի տարբերություններ: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է համադրական, վերլուծական և մոդելավորման մեթոդներով:

Քննարկում

«Բազմաբնույթ մտածողության» (ԲՄ) տեխնոլոգիայի հիմքում ընկած համանուն տեսությունը ձևավորվել է 20-րդ դարի 80-ական թթ. ամերիկացի մանկավարժ, հոգեբան, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Հովարդ Գարդների կողմից: Հենց այս տեսության հիման վրա էլ այսօր մանկավարժության մեջ կիրառվում է «բազմաբնույթ մտածողություն» տեխնոլոգիան: Մարդու բազմապիսի հնարավորությունները Հովարդ Գարդները անվանել է բազմաբնույթ մտածողություն [1]:

Հ. Գարդները կարծում է, որ բոլոր մարդիկ ունեն բազմաթիվ ներքին հնարավորություններ, որոնք նա անվանում է «մտածողություն»: Ուսուցչի կարևոր նպատակն է բացահայտել ամեն մի սովորողի ներուժը, հնարավորությունները («մտածողություն») և ուսուցման գործընթացը կազմակերպել դրանց հիման վրա: Հ. Գարդները ներկայացնում է մարդկանց հատուկ «մտածողության» յոթ հիմնական տեսակ:



Հ. Գարդների կողմից առաջարկված «մտածողության» յոթ ձևերից առաջին չորսը՝ լեզվական-խոսքայինը, տրամաբանական-մաթեմատիկականը, տեսողական-տարածականը և երաժշտականը, այս կամ այն չափով ընդգրկված են ավանդական ուսուցման մեջ: Գարդների առաջարկած հինգերորդ մտածողությունը՝ մարմնաշարժողականը, հավանաբար ամենաանսովորն է մեզ համար, քանի որ այն կիրառվում է որպես մկանային վարժանք (ֆիզկուլտ դադար,ֆիզիկական դաստիարակության դասեր):

Մտածողության մյուս ձևերը՝ միջանձնային և ներանձնային մտածողությունները, Գարդներն անվանում է «անձնային մտածողություններ»: Յուրաքանչյուր ոք կարող է զարգացնել իր բոլոր մտածողությունները, և եթե ճանաչենք դրանց զանազան զուգորդումները, ապա հնարավորություն կունենանք լուծելու այն հիմնախնդիրները, որոնք ծառացած են մեր

առջև: «ԲՄ տեսությունը ոչ թե նպատակ է, այլ գործիք՝ այդ նպատակին հասնելու համար» [2]:

Հաշվի առնելով մարդուն հատուկ մտածողության բազմազանությունը, մտքի բազմակողմանի և բազմապիսի հնարավորությունները՝ Գարդները առաջարկում է ուսուցման ընթացքում հենվել ոչ թե մտածողություններից մեկի կամ երկուսի, այլ միաժամանակ բոլորի վրա:

Կարծում ենք՝ գարդներյան բազմաբնույթ մտածողության (հնարավորություն, օժտվածություն) այս տեսակները հենց այն հիմնաքարերն են, որոնք ընկած են հանրակրթության պետական չափորոշիչներով սահմանված **կարողունակությունների** հիմքում:

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ակնկալվող վերջնարդյունքները, ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը [3]:

Հանրակրթական հիմնական ծրագրերը (հիմնական և ավագ դպրոց) մշակվում են Չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն [4]:

Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար:

Միջնակարգ կրթության կարողունակությունները ներկայացնենք գծակարգով՝

- Լեզվական գրագիտություն և կարողունակություն
- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- Թվային և մեդիա կարողունակություն
- Մշակութային կարողունակություն
- Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
- Տնտեսական կարողունակություն

Մեր ընտրած թեմայի (հիմնահարցի) ուսուցումը փորձել ենք կառուցել՝ ըստ վերոնշյալ կարողունակությունների կամ մտածողության տեսակների: Թեման ընդգրկված է 11-րդ դասարանի հայոց լեզվի առարկայական ծրագրում և դասագրքում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. 11-րդ դասարանի հայոց լեզվի առարկայական ծրագիր:

Թեմա 3
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
Հիմնական նպատակները
1. Զարգացնել շարահյուսական հոմանիշները խոսքում կիրառելու հմտություններ: 2. Նպաստել շարահյուսական հոմանիշների կիրառության կարևորմանը խոսքում: 3. Զարգացնել հաղորդակցական հմտություններ:
Վերջնարդյունքներ
1. Ճանաչի և համեմատի շարահյուսական հոմանիշները: 2. Խոսքում կիրառի շարահյուսական հոմանիշներ: 3. Տրված բառակապակցությունն արտահայտի մեկ բարդ բառով: 4. Բարդ ստորադասական նախադասությունը փոխակերպի դերբայական դարձվածով պարզ նախադասության և հակառակը՝ որոշելով ստորադաս նախադասության պաշտոնը: 5. Ներգործական կառուցվածքով նախադասությունը դարձնի կրավորական կառուցվածքի և հակառակը:

6. Մեջբերվող ուղղակի խոսքը վերածի անուղղակի խոսքի և հակառակը: 7. Կազմի երկխոսություն: 2-րդ հատված 8. Կազմի կապակցված խոսք՝ օգտագործելով դերբայական դարձվածներ: 9. Կետադրի տեքստը՝ առանձնացնելով դերբայական դարձվածները և բացատրելով կետադրությունը: 10. Կետադրի տեքստը՝ բացատրելով ուղղակի խոսքի կետադրությունը:	
Բովանդակություն	
1. Շարահյուսական հոմանիշներ 2. Բարդ բառ և բառակապակցություն 3. Հոլովաձև և կապական կառույց 4. Բարդ ստորադասական նախադասություն և դերբայական դարձվածով պարզ նախադասություն. նրանց փոխակերպումը և կետադրական օրինաչափությունները 5. Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք. նրանց փոխակերպումը և կետադրական օրինաչափությունները 6. Ներգործական և կրավորական կառույցներ. նրանց փոխակերպումը	
Առաջարկվող գործունեության ձևեր	**Խաչվող հասկացություններ**
1. Տրված նախադասությունների կապական կառույցները փոխարինել հոլովաձևերով: 2. Կազմել նախադասություններ՝ բարդ բառերը փոխարինելով բառակապակցություններով: 3. Տրված նախադասություններից ընտրել պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպելու ճիշտ տարբերակը: 4. Տրված բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպել դերբայական դարձվածով պարզ նախադասությունների՝ ընդգծելով դերբայական դարձվածները:	**Կայունություն և փոփոխություն** Նախադասության անդամների շարադասության հնարավոր փոփոխությունները խոսքում: **Ժամանակ և տարածություն** Ժամանակի և տարածության ներգործությունը խոսքի ձևավորման վրա: **Զարգացում** Ժամանակի ընթացքում շարահյուսական հոմանիշների կիրառության հաճախականության փոփոխությունը խոսում:

5. Տրված բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպել պարզ նախադասությունների՝ որոշելով ստորադաս նախադասությունների պաշտոնը։ 6. Ստեղծել տեղեկատվական տեքստ՝ կիրառելով դերբայական դարձվածներ։ 7. Գտնել և ներկայացնել բարդ ստորադասական նախադասություններով հարուստ պատմական տեքստ։ 8. Ներգործական կառուցվածքով նախադասությունները փոխակերպել կրավորականի և հակառակը։ 9. Կազմել կրավորական կառուցվածքով նախադասություններով հարուստ գործնական գրություններ։ 10. Տեքստի մեջբերվող ուղղակի խոսքերը դարձնել անուղղակի, նշել կատարած փոփոխությունները։ 11. Առանձնացնել և վերլուծել արձակ և չափածո տեքստերում հանդիպած երկխոսություններն ու մենախոսությունները։ 12. Շարադրել և վերարտադրել երկխոսություններով հագեցած փոքրիկ պատմվածք։ 13. Վերապատմել վերջերս դիտած գեղարվեստական կինոնկարը՝ կիրառելով անուղղակի խոսք։ 14. Գրական որևէ երկից ընտրել և ներկայացնել երկխոսություններ։ 15. Կազմակերպել այց որևէ թանգարան, հանդես գալ որպես էքսկուրսավար՝ խոսքում կիրառելով մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք։ 16. Մշակել և վարել հարցազրույցներ տարբեր տարիքի անձանց հետ։	

Ձայնագրել հարցազրույցները, վերլուծել հնչած խոսքը, ցույց տալ կիրառված պարզ և բարդ նախադասությունների կիրառման հաճախականությունը: 17. Թարգմանել փոքրածավալ տեքստեր՝ կիրառելով մեջբերվող ուղղակի խոսք: 18. Կազմել երկխոսություն վերջերս տեղի ունեցած մշակութային կամ սպորտային միջոցառման մասին, կետադրել, ներկայացնել: 19. Նախադասությունները վերլուծել շարահյուսորեն:	
Միջառարկայական (միջբնագավառային) կապեր	
Հասարակագիտություն: Վարչական տեքստերում, գործնական գրություններում բառակապակցությունների և կրավորական կառուցվածքով նախադասությունների կիրառման ուսումնասիրություն: **Բնագիտամաթեմատիկական առարկաներ**: Ներգործական և կրավորական կառուցվածքով նախադասությունների կիրառումը մասնագիտական տեքստերում: **Պատմություն:** Բարդ նախադասությունների կիրառում պատմական տեքստերում: **Օտար լեզուներ:** Մեջբերվող ուղղակի խոսքի, կրավորական կառուցվածքով նախադասությունների և դերբայական դարձվածով պարզ նախադասությունների թարգմանում: **Գրականություն:** Գրական ստեղծագործություններում բառերի ու բառակապակցությունների, մեջբերվող ուղղակի խոսքի կիրառում: **Արվեստ:** Բեմական արվեստում մեջբերվող ուղղակի խոսքի կիրառության հաճախականության մեկնաբանում:	
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ	
Մ1, Մ11, Մ14, Մ15, Մ24, Մ25, Մ26, Մ28, Մ33, Մ39, Մ40, Մ41	

Մեր դիտարկմամբ ուսուցման (առավել ևս լեզվի ուսուցման) գործընթացում կարողունակությունների հետևյալ աստիճանակարգումն առավել նպատակային է. առաջնային պետք է լինի սովորել սովորելու

կարողունակությունը, այնուհետև ինքնաճանաչողական ու սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա, մշակութային կարողունակությունները՝ որպես ընդհանրական կարողունակություններ:

Մինչդեռ լեզվական գրագիտություն և կարողունակությունը ու մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակությունը ներկայացնում ենք ըստ շարահյուսական հոմանիշների (փոխակերպումներ) ուսուցման մեր տարբերակի՝ ելնելով մեր ընտրած թեմայի բովանդակությունից և հաշվի առնելով հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը:

Սովորել սովորելու կարողունակություն

Ըստ այս կարողունակության՝ սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները, ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները վերլուծելու, ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ, ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Ըստ այս կարողունակության՝ սովորողները հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները: Նրանք դպրոցական միջավայրում ձևավորում են դասարանային մշակույթ. գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և տարակարծությունների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ:

Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

Ըստ այս կարողունակության՝սովորողները արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը (վերառարկայական կապեր):

Թվային և մեդիա կարողունակություն

Ըստ այս կարողունակության՝ սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին, գտնում և տարածում են տեղեկություններ, քննադատորեն վերլուծում, գնահատում և արժեորում դրանք: Աշակերտները տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները՝ դասագործընթացում նպատակային կիրառելու համար:

Մշակութային կարողունակություն

Ըստ այս կարողունակության՝ սովորողները ճանաչում են հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը՝ ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ, արժեորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը:

Շարահյուսական հոմանիշներից անդրադառնանք բարդ ստորադասական նախադասության փոխակերպմանը պարզի և ուղղակի մեջբերվող խոսքի փոխակերպմանը անուղղակի խոսքի ուսուցման հարցերին՝ ելնելով կարողունակություններից:

Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի

Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Ըստ այս կարողունակության՝սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր գրագետ հաղորդակցվում են՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների:

Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ճանաչելու, ըմբռնելու, արտահայտելու, ստեղծելու և մեկնաբանելու տարբեր հայեցակարգեր, փաստեր:

Ինչպես վերը նշեցինք, լեզվական գրագիտություն և կարողունակությունը ու մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակությունը ներկայացնում ենք ըստ շարահյուսական հոմանիշների (փոխակերպումներ) ուսուցման մեր տարբերակի:

Դիտարկումներ: Շարահյուսական հոմանիշները շարահյուսական այն կառույցներն են, որոնք տարբեր կազմություններ ունեն, սակայն գրեթե նույն իմաստն են արտահայտում. նրանց ճիշտ և տեղին գործածությունը խոսքի միօրինակությունից խուսափելու, տարբեր ձևերով խոսքն արտահայտելու հնարավորություն է ստեղծում:

Յուցումներ

1. Գլխավոր նախադասությունը չի փոփոխվում. փոփոխվում է երկրորդական նախադասությունը:

2. Ստորադասական շաղկապը փոխարինվում է համապատասխան կապով կամ ընկնում է:

3. Երկրորդական նախադասության ստորոգյալը դառնում է դերբայ

ում */ գրում եմ/ - → ող / գրող*

ել */ գրել եմ/ - → ած / գրած/*

Եթե երկրորդական նախադասության ստորոգյալը բայական չէ, անուն խոսքի մասին ավելանում է *լինել* բայը:

4. Եթե երկրորդական նախադասության ենթական *անձ* է, փոխվում է սեռական հոլովի, *իր* է, կարող է փոխվել սեռական հոլովի, կարող է մնալ ուղղականով:

Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն

Ըստ այս մտածողության՝ սովորողներն օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝

- փոխակերպման օրինաչափությունները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների,
- բանաձևերի, մոդելների, աղյուսակների միջոցով արտահայտելու, հասկանալու համար:

Բանաձևեր

➢Որպեսզի, որ (նպատակ) → ելու //ալու (+ համար, նպատակով)
➢Որովհետև, քանի որ (պատճառ) → ելու // ալու + պատճառով // շնորհիվ
➢Եթե [երբ, որ, թե] (պայման) → ելու //ալու + դեպքում
➢Թեև, չնայած /որ/, թեպետ (հակառակ հիմունք) → չնայած ելուն// ալուն, ելով //ալով հանդերձ
➢Քան, քան թե (փոխարինում) → ելու // ալու + փոխարեն // ելուց, ալուց
➢Հենց, հենց որ, թե չէ (ժամանակ այդ պահին) → ելուն // ալուն + պես
➢Երբ (ժամանակ) → ա) իս, ելու // ալու ժամանակ
բ) ելուց // ալուց հետո

գ) ելուց // ալուց առաջ
դ) ելով // ալով

✓ ԺՊ, *երբ*… /միջադաս /,… → ԺՊ՝ - *իս* / մասնավորեցնող պարագայական բացահայտիչ դդ/:

✓ Գլխավոր նախ. գոյական, *երբ* / միջադաս/…, → որոշիչ դդ:

❖ Գլխավոր նախ. <u>ստորոգյալ</u>, որ / խնդիր երկրորդական / → ՞

ա) ի՞նչ (ը) → ել(ը), ալ(ը) , գ) ինչի՞ց → ելուց, ալուց
բ) ինչի՞ն → ելուն, ալուն, դ) ինչի՞ մասին → ելու, ալու + մասին

❖ Գլխավոր նախ. <u>ստորոգյալ,</u> թե → ՞

ա) ի՞նչ(ը) → ելը, ալը
բ) ինչի մասին → ելու,ալու + մասին

Գլխավոր նախադասություն → հարաբերյալ
[3-րդ դեմքի անձնական կամ ցուցական դերանուն]
Երկրորդական նախադասություն → Հարաբերական

ա) այն…, որ //որոնք → ող ած
բ) նա…, ով / նրանք…, ովքեր → ողը ածը
դ) այնպես…, ինչպես // որ → ելու, ալու + պես // նման , ձևով
ե) այնքան…, որքան // որ / այնչափ …, ինչչափ → ելու, ալու + չափ
է) այնտեղ, ուր // որտեղ → ելու, ալու + տեղում

Ուղղակի խոսքի փոխակերպումն անուղղակիի

<u>Ցուցումներ</u>

1. Հեղինակի խոսքը որևէ քերականական փոփոխության չի ենթարկվում:

2. Հեղինակի խոսքը ինչ դիրք էլ ունենա, փախակերպման ժամանակ իբրև գլխավոր նախադասություն գործածվում է նախադաս:

3. Ուրիշի ուղղակի խոսքը ավարտվելուց հետո հեղինակի խոսքում սկզբից գործածվում է ստորոգյալը, հետո ենթական, մինչդեռ փոխակերպման դեպքում ենթական գործածվում է ստորոգյալից առաջ:

<u>Փոխակերպման մոդել</u>

<u>Բանաձևեր</u>

✓ Որ շաղկապ + պատմողական երանգի ուրիշի ուղղակի խոսք - նախադասություն:

✓ Թե շաղկապ+ հարցական երանգի ուրիշի ուղղակի խոսք - նախադասություն:

1. Եթե ուղղակի խոսքում հարցումը արտահայտվում է որևէ հարցական դերանվան միջոցով, երկրորդական նախադասությունը սկսվում է *թե երբ, թե ինչպես, թե որտեղ, թե ինչու* և նման կառույցներով:

2. Եթե ուղղակի խոսքում հարցումը արտահայտում է *ստորոգյալը* կամ նախադասության այլ անդամ, փոխակերպման դեպքում ավելանում է *արդյոք* բառը:

3. Կոչականը ուղղակի խոսքում կարող է

ա) գործածվել *գլխավոր նախադասության մեջ որպես հաղորդման անուղղակի խնդիր,*

բ) գործածվել *երկրորդական նախադասության մեջ որպես ենթակա:*

գ) Կոչականի փաղաքշական լրացումները, ձայնարկությունները փոխակերպվելիս ընկնում են:

դ) Փոխակերպվելիս կոչականն ընկնում է, եթե հեղինակի խոսքում նշվում է նա, ում ուղղված է խոսքը:

4. Ուղղակի խոսքի ա) *հրամայական եղանակի բայաձևերը* անուղղակի խոսքում փոխվում են *ըղձական եղանակի* (կարող է ավելանալ *թող* բառը), բ) *արգելական հրամայականի բայաձևերը* գործածվում են ժխտական խոնարհմամբ:

Աղյուսակ 2. Դերանունների փոփոխություն:

Դերանունները համապատասխանաբար կփոխվեն			
ուղղակի խոսք	անուղղակի խոսք	ուղղակի խոսք	անուղղակի խոսք
ես իմ ինձ ինձնից ինձնով	ինքը իր իրեն իրենից իրենով	մենք մեր մեզ մեզնից մեզնով	իրենք իրենց իրենց իրենցից իրենցով
դու քո քեզ քեզնից քեզնով	նա նրա նրան նրանից նրանով	դուք ձեր ձեզ ձեզնից ձեզնով	նրանք նրանց նրանց նրանցից նրանցով

Ելնելով 11-րդ դասարանի հայոց լեզվի առարկայական ծրագրի համապատասխան բաժնից և գործող դասագրքում զետեղված նյութերից՝ մենք չենք ներկայացնում փոխակերպման նմուշօրինակները, այլ հաշվի առնելով նույն ծրագրում առաջարկվող գործունեության ձևերը՝ առաջարկում ենք միջառարկայական կապեր ստեղծելու և ժամանակակից

համաշխարհային գրականությանը առնչվելու, մշակութային բազմազանություն ապահովելու համար աշխատել Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն ճայը» վիպակից քաղաբերված օրինակներով: Ուսուցման մեթոդ կարող է ծառայել «Երկու ձայնի պատմություն» (Tow voice poem) համեմատության եղանակը [5] (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. «Երկու ձայնի պատմություն» (Tow voice poem) համեմատության եղանակը

Տարբերություններ	Նմանություններ	Տարբերություններ

Ներկայացնենք վարժությունների նմուշօրինակներ:

1. *Վիպակից քաղաբերված բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպե՛ք պարզի՝ աշխատելով վերոնշյալ աղյուսակով*:

Գիշերը, երբ նա ուշքի եկավ, լուսնի լույսով սկսեց լողալ օվկիանի մակերևույթով:

Հենց որ նա փորձեց դուրս գալ խոյաթռիչքից, հենց փոխեց թևերի դիրքը, վայրկենապես հայտնվեց անկառավարելիության նույն աղետալի վիճակի մեջ:

Այլևս չեն լինի այն խոչընդոտները, որ ստիպում էին իրեն սովորել:

Նա լավ գիտեր, որ ինքը ցրիվ կգար միլիոնավոր մանր կտորների, եթե նման արագությամբ թռչելիս թևերը հանկարծ բացվեին:

2. *Վիպակից քաղաբերված մեջբերվող ուղղակի նախադասությունները փոխակերպե՛ք անուղղակի խոսքի՝ աշխատելով վերոնշյալ աղյուսակով*:

Նրա ծնողներն իսկապես խիստ ահաբեկված էին:

Ջո՛ն, – հարցնում էր մայրը, – ինչո՞ւ է բոլորի նման լինելն այդքան դժվար, ինչո՞ւ չես կարողանում ապրել՝ ցածր թռչելը ձկնկուլներին ու ալբատրոսներին թողնելով:

– Մենք քո Երամից ենք, Ջոնաթան, մենք քո եղբայրներն ենք: – Այդ խոսքերը հնչեցին մեղմ ու վստահ: – Մենք եկել ենք քեզ վերեւ տանելու, տանելու տուն:

Տոհմամետը ժպտաց՝ ողողված լուսնի լույսով:

– Դու դարձյալ սովորում ես, Ջոնաթան Ճայ, – ասաց նա:

– Ես ուզում եմ սովորել քեզ նման թռչել, – ասաց Ջոնաթանը, եւ աչքերը վառվեցին տարօրինակ փայլով: – Ասա՛ ինձ, թե ի՞նչ եմ անելու:

Լեզվի ծրագրային նյութի ուսուցման ընթացքում հաջորդական քայլերով կյանքի է կոչվում հիմնական նպատակներից մեկը՝ պատրաստել

գրագետ հաղորդակցվող, բանավոր ու գրավոր տրամաբանված խոսք, լեզվամտածողություն ունեցող անհատ, որն իր սեփական ջանքերով բացահայտում է գիտելիքը: Հայոց լեզվի ծրագրային նյութի ուսուցմանը զուգընթաց կարևորվում է հանրակրթության պետական չափորոշչով նախանշված կարողունակությունների զարգացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Gardner H.* Intelligence Reframed. Multiple intelligences for the 21st century, 1999. PP. 27–46:
2. *Խալաթյան Գ., Թորգոմյան Ս., Հարությունյան Ռ.* Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 2023: Էջ. 145–151:
3. ՀՀ Կառավարության որոշում N 136-Ն: URL: arlis.am/DocumentView.aspx?DocID=149788 (նայված է՝ 25.01.2025):
4. Հանրակրթական դպրոցում հայոց լեզվի և գրականության ուսումնառության ՀԱՅԵՑԱԿԱՐԳ (նախագիծ) URL: https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf (նայված է՝ 25.01.2025):
5. *Վարդանյան Գ.* Հին ու նոր մեթոդները դասավանդման արդի փուլում, Եր., 2019: Էջ 47:

REFERENCES

1. *Gardner H.* Intelligence Reframed. Multiple intelligences for the 21st century, 1999. PP. 27–46.
2. *Khalatyan G., Torgomyan S., Harutyunyan R.* Armenian Language teaching methodology, Yerevan, 2023: PP. 145–151.
3. RA Government Decision N 136-Ն: URL: arlis.am/DocumentView.aspx?DocID=149788 (accessed: 25.01.2025).
4. Concept of the study of the Armenian Language and literature in general educational school (draft) URL: https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d-7e.pdf (accessed: 25.01.2025).
5. *Vardanyan G.* Old and new methods in the modern stage of teaching, Yerevan, 2019. P. 47.

ФОРМИРОВАНИЕ КОМПЕТЕНТНОСТЕЙ УЧАЩИХСЯ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ СИНТАКСИЧЕСКИМ СИНОНИМАМ (ТРАНСФОРМАЦИИ)

С.Ф. Торгомян, Р.П. Джулфаян

АННОТАЦИЯ

Каждый новый день мир предстает перед человеком в новом формате, создавая ситуации, требующие способности анализировать, осмыслять и принимать верные решения для сохранения собственного существования и решения возникающих проблем. Жизнь диктует обществу новые стратегии мышления и деятельности, разработка которых в широком смысле составляет содержание современной образовательной политики. В условиях происходящей реконструкции, затрагивающей не только образовательные структуры, но и мышление в целом, особенно важно формировать у обучающихся убеждение в необходимости постоянного обучения для полноценного участия в жизни общества.

Язык, как форма мышления и средство коммуникации, позволяет человеку формулировать мысли и чувства словами. В данной статье исследуются разнообразные критерии мышления и функциональной грамотности, выявляется логическая взаимосвязь между сформированными способностями и значением преподавания грамматических структур языка. В качестве примера рассматривается обучение синтаксическим синонимам (трансформациям).
Цель работы – представить различные типы и особенности мышления, ключевые компетенции общего среднего образования, а также возможности их развития через обучение синтаксическим синонимам. Отмечается, что в старшей школе и системе высшего образования приоритетное значение приобретает самостоятельное обучение. В иерархии компетенций на первый план выходит способность к обучению, за которой следуют самоорганизационные, социальные, демократические, гражданские, цифровые, медийные и культурные компетенции как универсальные. При этом языковая, математическая и естественнонаучная грамотности развиваются, в частности, через овладение синтаксическими синонимами.
В статье также предлагаются методы обучения, учитывающие обязательный минимальный объем содержания основных общеобразовательных программ.
Ключевые слова: многомерное мышление, компетенции, синтаксические синонимы, трансформации, образовательные результаты.

THE FORMATION OF LEARNERS' COMPETENCIES IN THE PROCESS OF TEACHING SYNTACTIC SYNONYMS (TRANSFORMATIONS)

S. Torgomyan, R. Julfayan

ABSTRACT

Each new day presents the world to individuals in a new light, creating situations that require them to analyze, interpret, and make appropriate decisions to sustain their existence and address emerging challenges. Life imposes on society the need to develop new strategies of living and action, and the development of such strategies constitutes, in the broadest sense, the essence of modern educational policy. Today, a process of reconstruction is underway that affects not only educational structures but also ways of thinking. This necessitates, above all, fostering in learners the conviction that lifelong learning is essential to becoming active members of society and meaningfully participating in its diverse processes.
Language is both a form of thought and a means of communication, enabling individuals to articulate their ideas and emotions. This article examines the logical relationship between the competencies defined by state educational standards and the role and significance of teaching grammatical structures – specifically, syntactic synonyms (transformations) – in developing these competencies. The aim is to present the various types and characteristics of thinking, the core competencies of secondary education, and the possibilities for developing them through teaching syntactic synonyms. It is noted that both in high school and higher education, emphasis is placed on learners' independent study.

Within the hierarchy of competencies in education, the ability to learn occupies a primary position, followed by self-management, social, democratic, and civic competencies, as well as digital, media, and cultural competencies as universal skills. Meanwhile, linguistic, mathematical, and scientific-technical competencies are developed through the structured teaching of syntactic synonyms (transformations), aligned with the mandatory minimum content of core general education programs.
Keywords: diverse thinking, competencies, syntactic synonyms, transformations, educational outcomes.